մինչեւ տնօրինեսցեն զարժանն եւ ծանուսցեն ինքեանց, զի հանդիցեն ժողովուրդք սակաւ ինչ. յայս գիր ձեռըն-
արկեալ կնքեցին նա ինքն Կարապետ Պատրիարք և 15 գըլ-
խաւոր Ամիրայք, (1830. յ30 Հոկտեմբերի).

ԳԼՈՒԽ ԾԱ.

Այլազգի դռնապանք Ս. Յարութեան։ Կոլոտծք փանօրէից։ Ազա-
տութիւն Յունաց 'ի Բեթղեհէմ։ Զաքարիա փորձաւոր փոխանորդ յԵ-
րուսաղէմ։ Ուղեւորել նորին յԷջմիածին։ Բանալի երկաթեայ դրան
Բեթղեհէմի։ Շինութիւն Վերնատան. Վարժարան, Տպարան, երկ-
րաչափ. այլովքն հանդերձ։

Այլազգի դռնապանք Տաճարին Ս. Յարութեան
զմի փեղկն արտաքին դրան միայն բանային. զայս սահման
եդեալ էր նա ինքն Սալահատտին 'ի նախատինս Քրիստո-
նէից 'ի առնել նորին Երուսաղէմի, որպէս ասեն՝ 'ի ժա-
մանակս ուխտաւորաց և յաւուրս հանդիսի Տօնից չմնային
ժողովուրդք զերծ 'ի վտանգէ յելանելն եւ 'ի մտանելն
անդ՝ մանաւանդ կանայք և մանկունք, որոյ վասն Հայք
եւ Յոյնք ետուն գրել 'ի ձեռն Դատաւորի քաղաքին 'ի
Դուռն, զի հրամանաւ Արքայի բացցեն երկու փեղկ դրան
'ի կարեւոր ժամանակս (1831)։ Սակայն ոչ ժամանեաց
այն հրաման, մինչեւ տիրեաց Պաղեստինոյ Փոխ Արքայն
Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի, և որդի նորա Իպրահիմ Փաշա
ետ բանալ զայն։ Սուլթան Սէլիմ առաջին՝ 'ի տիրելն Ե-
րուսաղէմի սահմանեալ էր, զի իւրաքանչիւր ուխտաւոր
'ի մտանելն 'ի Ս. Յարութիւն տացէ մի փարայ այլազգի
դռնապանաց. իսկ ոմանք Արքունի գործակալաց հնարիւք
հանեալ հրովարտակ յափշտակեցին զպաշտօն դռնապա-
նութեան, և պահանջէին աւելի քան զսահմանեալն, եւ
բռնացեալ 'ի վերայ վանօրէից՝ խնդրէին զդէս պէս պար-
գեւս, և բարձաւ այս ١٠٧٨, 'ի ١٥ Մուհարրէմի հրովար-
տակաւ։ Եւ յետ այսորիկ ընկալան զպաշտօն դռնապա-
նութեան վերատեսուչք կոլուածոց Թասեքի Սուլթանի՝
և այլազգի գիտնականք որք ընթեռնուին զԿուրանն 'ի